600.0035.08.02.21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

08 փետրվարի 2021 թվականի №35Ա
ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի սեպտեմբերի 30-ի №668-20, հոկտեմբերի 14-ի №715-20, նոյեմբերի 10-ի №04-ԿՀ-09/1702 և նոյեմբերի 26-ի №04-ԿՀ-09/1735 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (այդ թվում՝ ապագայում գույքագրվելիք) հենասյուները (հենարանները) «Տեքս» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալությամբ հանձնելուն (այսուհետ՝ Գործարք) համաձայնություն տալու խնդրանքով,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2020 թվականի նոյեմբերի 26-ի № ԳԲ/34.1-Մ2-2/4778-2020 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ ստանալու Գործարքի վերաբերյալ կառավարության դիրքորոշումը,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2021 թվականի հունվարի 25-ի №02/12.8/1660-2021 գրությամբ Հանձնաժողով են ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ու էկոնոմիկայի նախարարությունների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության անվտանգության

խորհրդի քարտուղարի դիրքորոշումները՝ Գործարքի մասով առարկություններ չունենալու վերաբերյալ,

դ) Հանձնաժողովի կողմից գործարքին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի սպառնում ազգային անվտանգությանն ու պետական շահերին, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերությանը պատկանող (այդ թվում՝ ապագայում գույքագրվելիք) հենասյուները (հենարանները) «Տեքս» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալությամբ հանձնելու գործարքի կնքմանը՝ պայմանով, որ Ընկերությունը «Տեքս» փակ բաժնետիրական ընկերության հետ պայմանագրային իրավահարաբերությունների շրջանակում ապահովի, որ՝

1) «Տեքս» փակ բաժնետիրական ընկերությունը Գործարքի առարկա հանդիսացող գույքն օգտագործի և տիրապետի երրորդ անձանց պատկանող օպտիկամանրաթելային մալուխների անցկացման և սարքավորումների տեղադրման ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր կնքելու և դրանց հիման վրա ծառայություններ մատուցելու նպատակով, և որևէ կերպ «Տեքս» փակ բաժնետիրական ընկերության կողմից չօգտագործվի էներգետիկայի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար,

2) «Տեքս» փակ բաժնետիրական ընկերության կողմից Գործարքի առարկա հանդիսացող գույքի վարձակալությունը որևէ կերպ չխոչընդոտի Ընկերության կողմից իրականացվող էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման գործունեության առաջնային և պատշաճ իրականացմանը,

3) «Տեքս» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավորվի ապահովել Գործարքի առարկա հանդիսացող գույքի ապահով ծանրաբեռնվածությունը, անվտանգության նորմերը և այլ սահմանված կանոնները:

2. Ընդունել ի գիտություն, որ Գործարքի գործողության ընթացքում, օրենսդրության և էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման գործունեության լիցենզիայի շրջանակում, էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման գործունեության, այդ թվում՝ բաշխման ցանցի սպասարկման, շահագործման, կառավարման, պահպանման և բարելավման

գործառույթների պատշաճ իրականացման պարտավորությունը և պատասխանատվությունը կրում է Ընկերությունը:

3. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը,

2) սույն որոշման 1-ին կետով նախատեսված գործարքը կնքելուց հետո երկշաբաթյա ժամկետում Ընկերությունը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել դրա վերաբերյալ բոլոր փաստաթղթերի պատճենները:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
08 փետրվարի 2021թ.